ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Իսրայելի Պետության կառավարության միջև առողջապահության և բժշկության բնագավառներում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Իսրայելի Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր,

ցանկանալով զարգացնել իրենց երկրների միջև համագործակցությունն առողջապահության և բժշկության բնագավառներում,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Պայմանավորվող կողմերը կնպաստեն առողջապահության և բժշկության բնագավառներում համագործակցությանը հավասարության, փոխադարձության և փոխշահավետության հիման վրա: Համագործակցության հատուկ բնագավառները կորոշվեն փոխադարձ համաձայնությամբ՝ ելնելով այդ երկրների շահերից:

Հոդված 2

Պայմանավորվող կողմերը կգործադրեն բոլոր ջանքերը նպաստելու համար, մասնավորապես՝

- տեղեկության փոխանակմանը՝ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող առողջապահական բնագավառներում,
- ուսումնասիրությունների և խորհրդակցությունների նպատակով մասնագետների փոխանակումներին՝ ըստ սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածում նշված համագործակցության ծրագրերի,
- ուղիղ կապերի հաստատմանը իրենց երկրների հաստատությունների և կազմակերպությունների միջև,
- տեղեկության փոխանակմանը բժշկության և առողջապահության բնագավառում՝ նոր սարքավորումների, դեղամիջոցների և տեխնոլոգիական նորարարությունների վերաբերյալ,
- բժշկագիտության և առողջապահության բնագավառներում փոխադարձաբար համաձայնեցված համագործակցության նմանատիպ այլ ձևերին:

Հոդված 3

Պայմանավորվող կողմերը կփոխանակեն տեղեկություն առողջապահության և բժշկագիտության խնդիրներին վերաբերող համապատասխան երկրներում գումարվելիք միջազգային համաժողովների և գիտաժողովների մասին: Պայմանավորվող կողմերից որևէ մեկի խնդրանքով՝ մյուս Կողմը կտրամադրի նման հավաքների հրատարակած նյութերը:

Հոդված 4

Պայմանավորվող կողմերի համապատասխան մարմինները կփոխանակեն բժշկական գրականության ցուցակների և առողջապահության մասին կինոժապավեններ, ինչպես նաև առողջապահության բնագավառում գրավոր, տեսողական կամ տեսալսողական տեղեկատվական այլ նյութեր:

Հոդված 5

Պայմանավորվող կողմերը սույն Համաձայնագրի իրականացումը հանձնարարում են Հայաստանի առողջապահության նախարարությանը և Իսրայելի առողջապահության նախարարությանը: Սույն Համաձայնագիրն իրականացնելու համար նախարարությունները կստորագրեն համագործակցության ծրագրեր, որոնցում, ի թիվս այլ խնդիրների, կսահմանվեն նաև ֆինանսական հարցերը:

Հոդված 6

Սույն Համաձայնագիրը կհաստատվի կամ կվավերացվի Պայմանավորվող կողմերի ներպետական իրավական ընթացակարգի համաձայն: Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի դրա վավերացման մասին դիվանագիտական հայտագրերի փոխանակման օրվանից և ուժի մեջ կմնա անսահմանափակ ժամկետով: Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը՝ գրավոր ծանուցելով մյուս Կողմին իր այդ մտադրության մասին, այդ դեպքում Համաձայնագիրը կդադարի գործել նրա գործողության դադարեցման մասին ծանուցման օրից վեց (6) ամիս հետո:

Կատարված է Երուսաղեմ քաղաքում 1998 թվականի հոկտեմբերի 29-ին, որը համապատասխանում է 5759թ. խեշվանի 9-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, եբրայերեն և անգլերեն, բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2001 թվականի մայիսի 31-ից: